ԿՈԶՈՒՄՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺ

# ...ԵՐԲ ԾՆՎՈՒՄ ԵՆ ԲԱՑԱՌԻԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ



Անգնահատելի են ուսուցչի նվիրումն ու սերը, որոնք, մասնագիտական բարձր որակների հետ մեկտեղ, ամբողջացնում են նրա կերպարը, հաղորդում նրան անմոռանալի փայլ, որն անջնջելի հետք է թողնում մեզանից յուրաքանչյուրի կյանքում:

Այս իմաստով առանձնանում է մեր տիկին Էմմա Արգուլյանը, «Առաջին ուսուցիչ» պատվավոր կոչումը կրող նվիրյալը:

Էմմա Արգուլյանը ծնվել է Թբիլիսիում, մանկավարժի ընտանիքում: Միջնակարգ կրթության առաջին հինգ տարիները անցկացրել է Մառնեուլիի շրջանի Կիրովկա գյուղի դպրոցում, քանի որ ընտանիքը ժամանակավոր բնակվում եւ մանկավարժական գործունեություն էր ծավալում այդտեղ: Ապա վերադառնալով Թբիլիսի, ապագա ուսուցչուհին, իր ուսումը շարունակել է Հավլաբար թաղամասում գտնվող թիվ 95 հայկական դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել` մայրաքաղաքի Ա.Պուշկինի անվան մանկավարժական համալսարանի տարրական դասարանների ֆակուլտետ:

1978 թվականից մեր սիրելի տիկին Էմման իր` նվիրյալ մանկավարժի գործունեությունն է ծավալում Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցում: Մայրաբար, բացառիկ ուշադրությամբ ու սիրով, քնքշանքով, բայց նաեւ խստապահանջությամբ իր ուսերին կրելով միջնակարգ կրթության թերեւս ամենածանր բեռը` տարրական դասարանների դասվարումը: Քառամյակ, երբ երեխայի մեջ ձեւավորվում է աշակերտը, եւ ապա առաջանում սեր ուսման հանդեպ:

...Եվ այդպես, մոտ տասը թողարկում: Տիկին Էմման այն բացառիկ մանկավարժներից է, ովքեր ծնվում են հենց այդ ամենապատասխանատու առաքելության համար ու մնում այդպիսին մինչեւ վերջ: Իսկ երեխան նրանց ձեռքերում ոչ միայն կրթվում է, այլեւ մարդ մեծանում:

Տիկին Էմմա Արգուլյանը արարել է տարիներ շարունակ` չխնայելով սեփական ուժերն ու առողջությունը` կատարելագործելով ու հարստացնելով 80-ամյա թիվ 104 հանրային դպրոցի ուսումնական ավանդույթները:

Եվ ահա այսօր, պատվով ու առաքինությամբ մեր տիկին Էմման հեռանում է մասնագիտությունից` վայելելու վաստակած հանգիստը ԱՄՆ-ում բնակվող եւ` որպես սրտաբան-վիրաբույժ աշխատող իր միակ որդու, հարսի եւ սիրելի թոռնուհու շրջապատում:

Մեր քնքուշ տիկին Էմմային կիհշենք երախտագիտությամբ ու խոնարհումով, սիրով ու կարոտով, դպրոցում թողած նրա ձեռագրից մշտապես դասեր քաղելով:

Սիրելի տիկին Էմմա, մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, երկար ու ծիգ տարիների բարեկեցիկ կյանք:

***Թբիլիսիի 104 դպրոցի տնօրինություն, մանկավարժական կազմ, ծնողներ, աշակերտներ***

ԿՐԹԱԿԱՆ

# ԱՄՆ-Ը ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ Է 7 000 000 ԴՈԼԱՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

***ԱՄՆ-Վրաստան ռազմավարական գործընկերության շրջանակներում`` ամերիկյան կողմն իրականացնելու է 7 000 000 դոլարի կրթական ծրագիր:***



ԱՄՆ-ի պետական դեպարտամենտում անցկացվել է ԱՄՆ-Վրաստան ռազմավարական գործընկերության խարտիայի շրջանակներում` միջժողովրդական հարաբերությունների եւ մշակութային փոխանակման աշխատանքային խմբի հանդիպում, որին Վրաստանի կողմից համանախագահում էին կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Իրինե Աբուլաձեն եւ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վախթանգ Մախարոբլիշվիլին: ԱՄՆ-ի կողմը ներկայացնում էին կրթության եւ մշակույթի գործերի ուղղությամբ պետական քարտուղարի օգնականի տեղակալ Ալիշա Վուդվարդը եւ ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության վարչության տեղակալի օգնական Ալեքսանդր Սոկոլովսկին:

Աշխատանքային խմբի շրջանակներում, կողմերը քննարկել են Վրաստանի առաջընթացը եւ երկու երկրների միջեւ ընթացող համագործակցությունը կրթության, մշակույթի, ռազմավարական հաղորդակցությունների եւ քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ: Կողմերը զրուցել են համագործակցության առավել ընդլայնման անհրաժեշտությունների եւ համապատասխան ծրագրերի մասին:

Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ սերտ գործընկերության շրջանակներում USAID-ն իրականացնելու է 7 միլիոն դոլարի եւս մեկ լայնածավալ հնգամյա նախագիծ: «Achieving Student-Centered Education for a New Tomorrow (ASCENT)» նախագիծը նկատի ունի Վրաստանի բոլոր հանրակրթական հաստատություններում տարրական դասարանի աշակերտների գրագիտության, մաթեմատիկական մտածողության, խնդրի լուծման եւ քննադատական մտածողության ունակությունների զարգացում:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԱՀԱԶԱՆԳ

# ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՆ»

(Սկիզբը` 1-ին էջում)

Հունվարի 30-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, կառավարության նիստում խոսեց կորոնավիրուսի կանխարգելման նպատակով, առողջապահության նախարարության կողմից ձեռնարկված քայլերի մասին:

- Ցանկանում եմ ընդգծել այն արդյունավետ քայլերը, որոնք առողջապահության նախարարությունը ձեռնարկել է կորոնավիրուսի դեմ ուղղված գործողությունների տեսանկյունից: Առողջապահության նախարարությունն այս ուղղությամբ համակարգող մարմինն է եւ համապատասխան գերատեսչություններին, ցանկանում եմ հանձնարարել, որպեսզի գործողությունները լիովին համակարգեն առողջապահության նախարարության հետ:



Մենք, առաջին հերթին, կայացրել ենք որոշում, որը նշանակում է Չինաստանից ավիաչվերթերի դադարեցում,- հայտարարել է Գիորգի Գախարիան:

Բացի այդ, վարչապետի խոսքով, առողջապահական համակարգն այսօր լիովին պատրաստ է, Վրաստանում կորոնավիրուսի բացահայտման դեպքում, արդյունավետ պատասխանել այդ մարտահրավերին:

Հիշեցնենք, որ անցյալ տարվա դեկտեմբերին, նոր կորոնավարակով առաջին դեպքերը գրանցվեցին Չինաստանի Հուբեյ նահանգում: Հունվարի 29-ի դրությամբ, ինչպես տեղեկացրել է Չինաստանի Առողջապահության գործերի պետական կոմիտեն, երկրում նոր տիպի թոքաբորբով հիվանդացածների քանակն ավելացել է մինչեւ է 10 000, մահվան դեպքերի թիվը հասել է 213-ի: Միայն հունվարի 29-ին Չինաստանում հաջողվել է հայտնաբերել կորոնավիրուսով վարակման 1737 նոր եւ 38 մահաբեր դեպք: Չինաստանը վարակի դեմ պայքարի համար արդեն հատկացրել է 4 միլիարդ դոլար:

Նշենք, որ կորոնավարակի դեպքեր են հայտնաբերվել նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Եվրոպայում (Գերմանիա, Ավստրիա, Ֆինլանդիա եւ այլն) եւ ընդհանուր առմամբ` 20 երկրներում:

# ՎՐԱՍՏԱՆԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԿՈՐՈՆԱՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ «ԿԱՆԱՉ»` ՑԱԾՐ ՌԻՍԿԻ ԳՈՏՈՒՄ

***Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հավաստմամբ, Վրաստանում կորոնավարակի հետ կապված խուճապի հիմք չկա: Նրա խոսքով, Եվրոպայի հիվանդությունների վերահսկման կենտրոնի դասակարգմամբ, Վրաստանը «կանաչ»` ցածր ռիսկի գոտում է:***



Ամիրան Գամղրելիձեն վստահեցրեց, որ երկրում ամեն բան արվում է, որպեսզի կանխարգելվի վարակի մուտքը:

- Խուճապի հիմք չկա: Վրաստանն այս պահին Եվրոպայի հիվանդությունների վերահսկման կենտրոնի դասակարգմամբ, «կանաչ»` ցածր ռիսկի գոտում է: Չնայած այս ամենին, հաշվի առնելով, որ ամեն ամիս Չինաստանից Վրաստան է այցելում 4-5 հազար մարդ, իհարկե, վարակի բերման ռիսկ կա: Ուստի, երկրում ամեն բան արվում է, որպեսզի կանխարգելվի վարակի մուտքը,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

Նրա խոսքով, հունվարի 27-ից Վրաստանի Առողջապահության նախարարությունը սկսեց չինական կորոնավարակի դեմ պայքարի քարոզարշավը: Համաշխարհային առողջապահության կազմակերպության խորհրդատվությունների հիման վրա նախօրեին հետազոտող խմբերը սկսել են հերթապահել Թբիլիսիի միջազգային օդանավակայանում: Մասնագետները չափում են Չինաստանից ժամանած ուղեւորների մարմնի ջերմաստիճանը:

Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը արդեն համացանցում հրապարակում է առողջապահության համաշխարհային կազմակերպության խորհրդատվական գովազդները, թե ինչպես կանխել վիրուսի տարածումը:

Ուղիղ չվերթերը Չինաստանից Վրաստան արգելվել են մինչեւ փետրվարի 1-ը, սակայն Գամղրելիձեն նշում է, որ չինացիները ժամանում են տարբեր տրանզիտային չվերթերով: Նրա խոսքով, չինական Նոր տարվա տոնակատարությունների հետ կապված առաջիկա ամիսների ընթացքում` Չինաստանից Վրաստան կժամանի 4-5 հազար մարդ:

Վրաստանում Չինաստանի քաղաքացիներն աշխատում են խոշոր շինարարական օբյեկտներում, երկրի շրջաններում չինական կազմակերպություններն իրականացնում են ենթակառուցվածքային նախագծեր: Մասնագետները, համաճարակաբանները պետք է այցելեն Խարագաուլի` Հյուսիս-Հարավ ճանապարհի շինարարության օբյեկտ:

Վրաստանի առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեն հայտարարել է, որ նախատեսվում է Ուհան քաղաքից տարհանել Վրաստանի քաղաքացիներին:

Ըստ նրա, ամեն ինչ արվում է երկրում կորոնավարակի տարածման ռիսկը նվազագույնի հասցնելու համար:

- Մենք ծրագրում ենք տարհանել մեր քաղաքացիներին: Աշխարհը միասնական ուժերով պայքարում է կորոնավարակի դեմ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ միասին, մենք ներգրավված ենք կորոնավարակի կանխարգելման գործողությանը: Այս պահին վտանգ չկա, սակայն դա չի նշանակում, որ վտանգը բացառված է: Մենք անում ենք հնարավորը, որպեսզի վարակի տարածման ռիսկը հասնի նվազագույնի,- հայտարարել է Տիկարաձեն:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՀԱԶԱՆԳՈՒՄ Է

*Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը կորոնավիրուսի համաճարակը հռչակեց գլոբալ վտանգ: Այս մասին հայտարարել է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը` հատուկ հրավիրված մամլո ասուլիսին:*

*Ինչպես նշել են կազմակերպության կոմիտեի անդամները, վարակը մեկ մարդուց մյուսին փոխանցվելու առաջին դեպքը հաստատվել է Ուհանում, սակայն այս ճանապարհով փոխանցման արդեն 8 դեպք է գրանցվել Գերմանիայում, Ճապոնիայում, Վիետնամում եւ ԱՄՆ-ում:*

*Կազմակերպության տեղեկությամբ` վարակը տարածվում է առողջապահական թույլ համակարգ ունեցող երկրներում:*

*Նոր տիպի կորոնավիրուսից մահացել է 213 մարդ: Վերջին տվյալներով, վարակված է 10 000-ից ավելի մարդ, այդ թվում մոտ 100-ը` աշխարհի 20 երկրներում:*

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆ



***Հին չինական մի ասացվածք կա՝ «Եթե հիվանդության հայրն անհայտ է, ապա մայրը հաստատ սնունդն է»: Եթե դա համապատասխանում է իրականությանը, ապա հետաքրքիր է՝ սննդառությունը ինչպե՞ս է ազդում, ասենք, տեսողության վրա:***

***Ա.Մուրադյան***

***Ախալքալաքի***

Դա կարելի է ընդհանրացված ասել մարդու մարմնի բոլոր օրգանների, մասնավորապես, նաեւ աչքերի առնչությամբ: Չէ՞ որ, իսկապես, եթե դուք կարճատես չեք, հեռատես չեք, աստիգմատիզմ կամ տեսողական այլ խնդիրներ չունեք, բայց ձեր տեսողությունը, այնուամենայնիվ, վատանում է, աչքերը հոգնում են եւ արցունքակալում, ապա պետք է մտածել, թե ինչո՞ւ է դա տեղի ունենում: Ակնաբույժները սովորաբար սննդի մասին ցուցումներ չեն տալիս: Սակայն հարկ է նշել, որ սխալ սննդառության դեպքում ողջ օրգանիզմի վիճակի վատթարացմանը զուգընթաց, վատանում է նաեւ տեսողության վիճակը: Թուլանում են աչքերի մկանները, քանի որ արյունն ավելի քիչ սննդարար նյութեր է տեղ հասցնում: Իսկ այն հանգամանքը, որ աչքի ցանցաթաղանթը բավարար չափով չի ապահովվում անհրաժեշտ նյութերով, կարող է հանգեցնել նյարդային ուժեղ ազդակների առաջացման անկարողության: Արդյունքում՝ ուղեղում ձեւավորված պատկերները կարող են աղավաղվել: Այդ պատճառով պետք է հոգ տանել, որ մեր սեղանին հայտնված մթերքները հարուստ լինեն սննդարար նյութերով, միկրոտարրերով եւ վիտամիններով:

ՎԱՐԿԱՆԻՇ

## ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԹԱՆԿ ՔԱՂԱՔՆԵՐԸ



***Որքանով տեղեկացված ենք, աշխարհի քաղաքների համար վարկանիշային տարբեր սանդղակներ են կազմում, ելնելով բնակչության թվից, ենթակառույցների քանակությունից եւ այլն: Հետաքրքիր է՝ բնակության համար ծախսվող գումարների քանակով նման սանդղակ մշակվո՞ւմ է:***

***Տ.Վարդանյան***

***Մառնեուլի***

Նման ուսումնասիրություններ անց են կացվում: Օրինակ, Numbeo վիճակագրական ռեսուրսը հրապարակել է աշխարհի ամենաթանկ քաղաքների վարկանիշը: Հունվարի համար ընկերության հաշվետվության մեջ առաջատարը, ըստ «կյանքի արժեքի ինդեքսի», դարձել է Ցյուրիխը:

Առաջին հնգյակի բոլոր տեղերը բաշխվել են շվեյցարական քաղաքների միջեւ: Ցյուրիխին հաջորդում են Բազելը, Լոզանը, Ժնեւը եւ Բեռնը:

Տասնյակում նաեւ տեղ են գտել Ստավանգերը, Օսլոն եւ Տրոնհեյմը (բոլորն էլ՝ Նորվեգիա), Ռեյկյավիկը (Իսլանդիա) եւ Բերգենը (Նորվեգիա): Ռուսաստանի ամենաթանկ քաղաք է ճանաչվել Մոսկվան, որը 251-րդ տեղում է:

Ընդամենը ցուցակում ներառված է 440 քաղաք: Ինչպես նշվում է ծառայության կայքում, «կյանքի արժեքի ինդեքսը» հաշվարկվում է խանութներում եւ ռեստորաններում գների, տրանսպորտով երթեւեկության գների, կոմունալ ծառայությունների համար ծախսերի, ինչպես նաեւ՝ տեղի բնակչության գնողունակության հիման վրա:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

## ԼՈՒՍՆԻ ՎՐԱ ԿԱՐՈՂ ԷՐ ԿՅԱՆՔ ԼԻՆԵԼ

***Երկրի այս արբանյակի վրա կյանքի համար բարենպաստ պայմաններ են ստեղծվել 3,5 միլիարդ տարի առաջ:***



Վաշինգտոնի նահանգի համալսարանից աստղակենսաբանների մի խումբ ներկայացրել է վարկած, որի համաձայն Լուսնի ձեւավորումից հետո դրա միջուկից մեծ քանակությամբ գազ, ինչպես նաեւ ջրային գոլորշի է ժայթքել, ինչի արդյունքում հնարավոր է, որ երկնային մարմնի մակերեսին լճակներ եւ խիտ մթնոլորտ առաջանային, որոնք կյանքի առաջացման նախանշաններն են:

Մասնավորապես, հայտնի է դարձել, որ Լուսնի մակերեւույթին ջրային սառույցի մեծ ծավալներ են նկատվում, որոնք առկա են խառնարաններում:

Եթե պարզվի, որ Լուսնի վրա իսկապես կյանք է եղել, ապա հնարավոր է, որ այն երկիր մոլորակից այնտեղ տարված լիներ կենսաբանական մոլեկուլների ձեւով: Այն ժամանակ Երկիր մոլորակը, ինչպես նաեւ նրա արբանյակը մետեորիտների բավականին ինտենսիվ ռմբակոծման են ենթարկվել:

ԱՀԱԶԱՆԳ

## ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԼՈՒՐՋ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՏՃԱՌ



Աշխարհի ամենատարբեր ընկերությունների (գազի եւ նավթի արտադրությունից մինչեւ ավտոմոբիլաշինական ֆիրմաներ) կապիտալիզացիան կարող է 2,3 տրլն դոլարով նվազել կառավարությունների կողմից կլիմայական փոփոխությունների հետ կապված նորմատիվային պահանջների խստացման հետեւանքով: Այս գնահատմամբ հանդես է եկել ՄԱԿ-ի ֆինանսական նախաձեռնության Principles for Responsible Investment (PRI, «Պատասխանատու ներդրման սկզբունքները») կազմակերպությունը:

Նրա կանխատեսումների համաձայն, առավել մեծ կորուստները կկրեն ածխի ընկերությունները՝ 44 տոկոս, նաեւ նավթի ու գազի ընկերությունները՝ 31 տոկոս: Միեւնույն ժամանակ շահած կլինեն այն ավտոարտադրողները, որոնք զգալի միջոցներ են ներդրել էլեկտրամոբիլների բնագավառում, ինչպես նաեւ էլեկտրաէներգետիկական ֆիրմաները: Նրանց կապիտալիզացիան կարող է աճել կրկնակի: Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանն ուղղված նորմատիվների բարձրացումը, ինչպես սպասվում է, կարագացվի կլիմայի վերաբերյալ Փարիզի համաձայնագրի պահանջների կատարման անհրաժեշտության կապակցությամբ, համաձայնագիր, որը նախատեսում է տաքացումը պահել Ցելսիուսի 1,5 կամ 2 աստիճանի նշագծի վրա, կարծում են PRI-ի փաստաթղթի հեղինակները: Այդ կազմակերպությունը ներկայացնում է այն ներդրողների շահերը, որոնց հսկողության տակ գտնվում են 86 տրիլիոն դոլարի չափով ակտիվներ: Մոլորակի վրա կլիմայական փոփոխությունների ավելի ու ավելի մեծ թվով վկայությունների հայտնվելը եւ «սոցիալական ճնշման աճը» կառավարություններին կարող է դրդել վճռական գործողությունների, կարծում է «Պատասխանատու ներդրման սկզբունքների» գործադիր տնօրեն Ֆիոնա Ռեյնոլդսը: Իրադարձությունների նման զարգացումը «իսկայական սպառնալիքներ է ստեղծում ակտիվների եւ ավելի ընդարձակ համակարգի համար»,- հավելել է նա, հաղորդել է ՏԱՍՍ գործակալությունը:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

☝ Եթե չեք ցանկանում, որ սոխը, սխտորը, դափնու տերեւը, հատիկավոր բիբարը եւ այլ համեմունքները լողան ապուրի երեսին, խորհուրդ է տրվում կարել թաղիֆի հատուկ պարկը, այն ամենը լցնել մեջը եւ գցել ապուրի մեջ: Պարկի բերանը պետք է փաթաթել թելով, իսկ թելն ամրացնել կաթսայի բռնակին: 10-15 րոպե եռալուց հետո (դա այն ժամանակն է, որի ընթացքում դուրս են գալիս բոլոր համերը) կարելի է պարկը հանել, դատարկել պարունակությունը, լվանալ միայն օճառով: Դա թույլ կտա պարկն օգտագործել եւս մի քանի անգամ:

☝ Որպեսզի ստացվի թանձր, համեղ արգանակ, միսը եւ ոսկորները խորհուրդ է տրվում եփել սառը ջրում: Իսկ որպեսզի միսը համեղ լինի, խորհուրդ է տրվում միսը եփել տաք ջրում:

☝ Մսի արգանակը տաքացնելիս՝ խորհուրդ չի տրվում կաթսան ծածկել կափարիչով, գոլորշիների ազատ հեռացումը թույլ չի տա, որ արգանակը մգանա:

☝ Եթե միսը եփելու ժամանակ չի հասցվել հեռացնել առաջացած քափը, ապա խորհուրդ է տրվում արգանակի վրա լցնել մի բաժակ սառը ջուր, քափը բարձրանում է վերեւ, եւ հնարավոր է դառնում հեռացնելը:

☝ Որպես արգանակը պղտոր չլինի, միսը պետք է եփել ցածր կրակի վրա:

☝ Մսի արգանակին աղը պետք է ավելացնել պատրաստ լինելուց 30 րոպե առաջ:

☝ Բանջարեղենը եւ ծավարեղենը պետք է լցնել եռջրի մեջ: Բացառություն են կարտոֆիլը եւ ընդավորները, որոնց պետք է եփել սառը ջրի մեջ:

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ 80-ամյա ծերունին գալիս է բժշկի մոտ.*

*- Բժիշկ, պատրաստվում եմ ամուսնանալ:*

*- Իսկ քանի՞ տարեկան է հարսնացուն:*

*- Տասնութ:*

*Այդ դեպքում պիտի զգուշացնեմ ձեզ, սեռական ակտիվությունը կարող է բերել մահվան...*

*- Դե, ի՞նչ արած,- հոգոց է հանում ծերունին:- Եթե նրա ճակատին գրած է, որ ջահել է մեռնելու...*

*☺ Երեկ տեսա քեզ մի կնոջ հետ՝ շատ հետաքրքիր հանգամանքներում:*

*- Դա իմ օրինական կինն էր:*

*- Փա՜ռք Աստծո: Թե չէ խղճացի քեզ: Մտածեցի՝ ախր այդ ինչ հրեշ է կինդ, որ պատրաստ ես քարշ գալ այդպիսի անճոռնու հետ:*

*☺ Ամուսինը երկար պրպտում է գրպանները, հետո էլ՝ վշտացած ասում կնոջը.*

*- Դրամապանակս չեմ գտնում:*

*- Շալվարիդ գրպանում նայե՞լ ես:*

*- Այո:*

*- Իսկ վերարկուի՞դ:*

*- Այո:*

*- Իսկ ծոցագրպանո՞ւմ:*

*- Ոչ:*

*- Ինչո՞ւ:*

*- Եթե այնտեղ էլ չլինի, ինձ ինֆարկտ կխփի:*

*☺ Աղքատ վանեցին գալիս է խնամախոսուհու մոտ.*

*- Ուզում եմ ամուսնանալ, բայց աղջիկը պետք է լավ ընտանիքից լինի, ջահել, գեղեցիկ ու հարուստ:*

*- Ի՞նչ,- վրդովվում է խնամախոսուհին:- Ախր եթե այդպիսի աղջիկը համաձայնի ամուսնանալ քեզ պես քրջոտի հետ, ուրեմն խելագար է:*

*- Դե ինչ, եթե թվարկածս ամեն ինչն ունենա, ապա համաձայն եմ, թող խելագար լինի:*

*☺ Տարեց հրեան մահանում է աշխատավայրում: Մեկ ուրիշ հրեայի ուղարկում են, որ հայտնի գույժը նրա կնոջը: Սա գալիս է նշված հասցեով, թակում դուռը:*

*- Այստե՞ղ է ապրում Ռաբինովիչի այրին:*

*- Ներեցեք, բայց ես այրի չեմ:*

*- Գրազ գա՞նք:*

*☺ Մի մարդ վազում է ոստիկանի մոտ.*

*- Հենց նոր այն անկյունում խլեցին ժամացույցս:*

*- Իսկ ինչո՞ւ օգնության չկանչեցիք:*

*- Վախեցա բերանս բացել: Ատամներս ոսկուց են:*

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ատենոք սուտ խոսողներուն լեզուն կը կտրեին, եթե այս սովորությունը նորեն մտնի՝ քիչ մարդ պիտի տեսնենք, որ բերնին մեջ լեզու ունենա:

***ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ***
***(1843-1891)***
***Հայ գրող-երգիծաբան***

Թե չի սիրում՝ թո'ղ չսիրի, սակայն երբե'ք չբամբասի:

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(XII դար)***
***Վրաց բանաստեղծ***

Կարողացեք ձեզ պատկերացնել մեկ այլ մարդու վիճակում եւ հասկանալ, թե ինչ է պետք նրան, այլ ոչ թե ձեզ: Աշխարհը նրա հետ կլինի, ով կկարողանա դա անել:

***ԴԵՅԼ ՔԱՐՆԵԳԻ***
***(1888-1955)***
***Ամերիկացի գրող***

Մարդիկ երբեք չեն լինում ո'չ չափազանց լավ, ո'չ չափազանց վատ:

***Ֆ.ԼԱՌՈՇՖՈՒԿՈ***
***(1613-1680)***
***Ֆրանսիացի քաղաքական գործիչ***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ Ն.ՓԱՇԻՆՅԱՆ-Մ.ՄԻՇՈՒՍՏԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

*Հունվարի 31-ին, Ալմաթիում անցկացվող Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Ռուսաստանի Դաշնության կառավարության նորանշանակ նախագահ Միխայիլ Միշուստինի հետ:*



Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին հայ-ռուսական տնտեսական հարաբերություններին առնչվող հարցերի լայն շրջանակ: Մասնավորապես, Նիկոլ Փաշինյանը եւ Միխայիլ Միշուստինն անդրադարձել են առեւտրատնտեսական կապերի ընդլայնմանը, ենթակառուցվածքների, էներգետիկայի, արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների, միկրոէլեկտրոնիկայի ոլորտներում համատեղ ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորություններին վերաբերող հարցերի: Միխայիլ Միշուստինն ընդգծել է, որ ռուսական կողմը շահագրգռված է առաջիկայում քննարկել ՏՏ ոլորտում կոնկրետ ծրագրերի իրականացման հեռանկարները: Վարչապետ Փաշինյանը ողջունել է նախաձեռնությունը եւ կարեւորել այդ ոլորտում եւս երկկողմ համագործակցության զարգացումը:

Կողմերը կարեւորել են նաեւ հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի գործունեությունը՝ համագործակցությանը նոր թափ հաղորդելու առումով:

Ալմաթիում Հայաստանի վարչապետը հանդիպում ունեցավ նաեւ Մոլդովայի վարչապետ Իոն Կիկուի հետ:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐՎԵԼ Է ԱՎԵԼԻՆ, ՔԱՆ ՎԵՐՋԻՆ ԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

Հունվարի 25-ին Կապանում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, մամլո ասուլիսում ներկայացնելով Նոր Հայաստանի մասին 100 փաստերը, հայտարարեց, որ Հայաստանի կառավարության կողմից 2019 թվականին պետական նշանակության հիմնանորոգված ավելի քան 350 կմ ճանապարհը այնքան է, որքան 2015, 2016, 2017 թվականներին հիմնանորոգվածները միասին վերցրած:

- 2019 թվականին կառուցվել եւ հիմնանորոգվել է 350 կմ ավտոճանապարհ, ինչպես նաեւ սուբվենցիոն ծրագրերով հիմնանորոգվել է եւս 110 կմ ճանապարհ, այսինքն՝ կառուցվել է շուրջ 460 կմ ճանապարհ: 2019-ի պետական նշանակության հիմնանորոգված ավելի քան 350 կիլոմետր ճանապարհը այնքան է, որքան 2015, 2016, 2017 թվականներին հիմնանորոգվածները միասին վերցրած: Փաստացի մեկ տարում կատարվել է այնքան աշխատանք, որքան նախկինում կատարվում էր 3 տարում,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

## ԸՆԴԳԾՎԵՑ ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



*Հունվարի 26-ին, աշխատանքային այցով Իսրայելում գտնվող Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպել է Իսրայելի նախագահ Ռուվեն Ռիվլինի հետ:*

Իսրայելի ղեկավարը Հայաստանի նախագահին շնորհակալություն հայտնեց Հոլոքոստի հիշատակին նվիրված 5-րդ միջազգային համաժողովին մասնակցելու համար: Հանդիպմանը անդրադարձ կատարվեց Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը՝ Հայաստանի նախագահը կարեւոր է համարել, որ Իսրայելը առաջնային դեր ունենա եւ ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Ընդգծելով, որ պատմության այս անոթալի էջի ճանաչումն ու դատապարտումը չպետք է պայմանավորված լինի քաղաքական նպատակահարմարություններով՝ Արմեն Սարգսյանն ասել է, որ ճանաչումն ու դատապարտումն անհրաժեշտ են, որպեսզի նման մարդկային աղետներ այլեւս երբեք չլինեն եւ երբեւէ չկրկնվեն:

Ինչ վերաբերում է համագործակցության հեռանկարներին, ապա Արմեն Սարգսյանը նշել է, որ ապագան նորագույն տեխնոլոգիաներն են: Հայաստանի նախագահը վստահություն է հայտնել, որ երկու երկրները կարող են հաջողությամբ համագործակցել այս ոլորտում:

Զրուցակիցները համակարծիք էին, որ փոխգործակցության ներուժը բավական մեծ է եւ պետք է շատ աշխատել՝ ներգրավելով նաեւ երկու երկրների սփյուռքի ներկայացուցիչներին:

Համագործակցության առումով հեռանկարային են համարվել նաեւ կրթության, մշակույթի, տուրիզմի ոլորտները:

Հայաստանի նախագահը Իսրայելի նախագահին հրավիրեց Հայաստան:

## ԿԱՅԱՑԱՎ Զ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ - Է.ՄԱՄԵԴՅԱՐՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Հունվարի 29-ին Ժնեւում սկսվեց եւ հունվարի 30-ին շարունակվեց Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Զոհրաբ Մնացականյանի եւ Էլմար Մամեդյարովի հանդիպումը:*



Հանդիպումն անցկացվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Ստեֆան Վիսկոնտիի (Ֆրանսիա), Էնդրյու Շոֆերի (ԱՄՆ) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկի միջնորդությամբ եւ մասնակցությամբ:

Եռօրյա ինտենսիվ քննարկումների ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները եւ ԱԳ նախարարները քննարկել են օրակարգային հետեւյալ հարցերը. 2019 թվականին ձեռք բերված պայմանավորվածությունների եւ քննարկված առաջարկների իրականացումը եւ ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելու ուղղությամբ հնարավոր հաջորդ քայլերը, ապագա կարգավորման հիմքը հանդիսացող սկզբունքները եւ տարրերը, կարգավորման գործընթացի

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԱՐԱԿԻ ՈՐԵՎԷ ԴԵՊՔ ՉԻ ՎԱՎԵՐԱՑՎԵԼ

*Հայաստանն արդեն պայմանավորվածություն ունի չինական մի ընկերության հետ եւ շուտով ձեռք կբերի կորոնավիրուսի ախտորոշման լաբորատոր թեստ:*

Այդ մասին հունվարի 31-ին հրավիրված ասուլիսում հայտնեց Հայաստանի առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը:

- Բժշկական ախտորոշիչ թեստերի խնդիր ունենք, խնդիր ունեն բոլորը, քանի որ հիվանդությունը նոր է, եւ թեստը նոր է մշակվում: Սակայն մենք այսօր առավոտյան արդեն պայմանավորվածություն ունենք մի չինական արտադրողի հետ՝ այդ թեստը ձեռք բերելու համար: Մեր դեսպանատունը մի քանի ժամվա մեջ այդ թեստերը ձեռք կբերի եւ կուղարկի Հայաստան, որպեսզի անհրաժեշտության դեպքում կիրառվեն,- ասաց Թորոսյանը:

Նա շեշտեց՝ թեստերը կիրառվում են միայն կլինիկական ախտանշանների ի հայտ գալու դեպքում, երբ ուզում են դիֆերենցել այլ հիվանդություններից:

### ԱՐԱՄ ԹԱՆԱՆՅԱՆԸ՝ ԼԱՐՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԿՑՈՐԴ



*Հայաստանը Ռուսաստանին կապող միակ ցամաքային ճանապարհի՝ Վրաստան-Ռուսաստան սահմանի Վերին Լարսի անցակետում Հայաստանի մաքսային կցորդի պաշտոնում նշանակվեց Արամ Թանանյանը: Այդ մասին որոշումն ընդունվեց հունվարի 30-ին կառավարության նիստում:*

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդգծեց, որ մաքսային կցորդն աշխատելու է Վերին Լարսի անցակետի մոտակայքում:*

### 22 ՀՐՇԵՋ ՄԵՔԵՆԱ ՃԱՊՈՆԻԱՅԻՑ ԵՎ 26 ԱՆՈՒՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

*Արտակարգ իրավիճակների նախարարության շարահրապարակում կայացավ Ճապոնիայի կառավարության կողմից Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությանը 22 հրշեջ ավտոմեքենայի հանձնման հանդիսավոր արարողությունը:*

*Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ ԱԻ նախարար Ֆելիքս Ցոլակյանը, Հայաստանում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջուն Յամադան եւ այլ բարձրաստիճան պաշտոնատար անձինք:*

*Ինչպես նշեց Ֆելիքս Ցոլակյանը, Ռուսաստանից սպասվում է 26 անուն փրկարարական տեխնիկա, ինչը կնպաստի փրկարարական տեխնիկայով ստորաբաժանումների հագեցվածությանը:*

### ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ ԵՌԱՊԱՏԿՎԵԼ Է

*2019թ. ընթացքում Հայաստան ներմուծվել է 189 հազար 018 ավտոմեքենա, որը շուրջ երեք անգամ գերազանցում է 2018 թվականի ցուցանիշը:*

*Այդ ընթացքում իրականացվել է ավտոտրանսպորտային միջոցների չեւակերպումները ՊԵԿ հյուսիսային ավտոմաքսատուն-վարչություն տեղափոխելու գործընթացը, ինչի արդյունքում երրորդ երկրներից Հայաստան ներմուծվող տրանսպորտային միջոցների հոսքը աստիճանաբար վերաուղղվել է դեպի Գյումրի:*

### ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

*Հայաստանի գլխավոր դատախազությունը հաստատել է երկրի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի եւ մյուսների քրեական գործով մեղադրական եզրակացությունը. այն, քրեական գործի հետ միասին, ուղարկվել է Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:*

*Հիշեցնենք, որ անցյալ տարվա դեկտեմբերի 4-ին Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ որպես խափանման միջոց ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին: Ըստ ՀՔԾ-ի հաղորդագրության՝ Սարգսյանը, զբաղեցնելով ՀՀ նախագահի պաշտոնը, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, 2013 թվականին կազմակերպել է պաշտոնատար մի խումբ անձանց կողմից պետությունից վատնելու եղանակով առանձնապես խոշոր չափերով գումարի՝ 489.160.310 ՀՀ դրամի հափշտակության կատարում:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՓԵՏՐՎԱՐ



*1.02.2020 Սուրբ Գրիգոր Աստվածաբանի հիշատակության օր*

*2.02.2020 Բարեկենդան Առաջավորաց Պահքի*

Առաջավորաց պահքի շրջանը հատուկ է միայն Հայ եկեղեցուն: Սկսվում է Մեծ պահքից երեք շաբաթ առաջ: Պահանջվում է խիստ պահեցողություն: Հնում այդ օրերին թույլատրվել է միայն աղ ու հաց ուտել:

*3.02.2020 Առաջավորաց պահք*

Առաջավորացն առաջին պահքն է, որ հաստատվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից:

Պահք պահելուց առաջ ցանկալի է գնալ եկեղեցի, մասնակցել երեկոյան ժամերգության եւ աղոթել, որ Աստված զորացնի՝ պահքը ճիշտ անցկացնելու եւ հոգեւոր օգուտներ քաղելու համար: Պահքից դուրս գալու համար կարեւոր է Սուրբ Սարգսի տոնին մասնակցել Սուրբ պատարագին եւ հաղորդություն ստանալ:

*7.02.2020 Սուրբ Հովնան մարգարեի հիշատակության օր*

## ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Հունվարի 24-ին Վրաստանում Ավետարանական-Մկրտական եկեղեցու Թբիլիսիի Խաղաղության Մայր տաճարում, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի, Վրաստանում Հռոմեա-Կաթոլիկական եկեղեցու, Վրաստանում Ավետարանական-Լյութերական եկեղեցու եւ Վրաստանում Ավետարանական-Մկրտական եկեղեցու մասնակցությամբ, ընդհանրական էկումենիկ աղոթք բարձրացվեց՝ հանուն միասնության եւ փոխադարձ սիրո ու բարեկամության: Վրաստանում, արդեն մի քանի տարի, միասնության այս աղոթքը բարձրացվում է 4 քրիստոնեական դավանանքների նախաձեռնությամբ:*

Արարողությանը, մյուս եկեղեցիների հետ միասին, մասնակցում էր Վիրահայոց թեմը՝ հոգեւորականների եւ սարկավագաց դասի կազմով՝ Տեր Նարեկ քահանա Ղուշչյանի գլխավորությամբ:

Ընդհանրական աղոթքին իր ներկայությունն էր բերել Վրաստանում եւ Հայաստանում Վատիկանի դեսպան արքեպիսկոպոս Խոսե Ավելինո Բետենկուրտը:

Էկումենիկ աղոթքն ավարտվեց հոգեւոր հայրերի կողմից իրենց մայրենի լեզվով աղոթքով եւ օրհնությամբ:

ՍՊՈՐՏ

## ՄԻԱՆԳԱՄԻՑ ՎԵՑ ՉԵՄՊԻՈՆ՝ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿ

*2019 թվականին, վրացական սպորտի պատմության մեջ առաջին անգամ, օլիմպիական մարզաձեւերում երկիրն ունեցավ վեց չեմպիոն: Գրանցվեց համաշխարհային ռեկորդ եւ, ընդհանրապես, վրաց մարզիկների կողմից տարվա ընթացքում նվաճվեց շուրջ 1200 տարբեր արժողության մեդալ: Այս հաղթանակի նշանավորումն ու տոնումը կայացավ Հավլաբարի պետական արարողությունների պալատում՝ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու եւ երկրի գործադիր ու օրենսդիր մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:*



Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից 2019 թվականի տարվա լավագույն մարզիկներ ճանաչվեցին միանգամից վեց չեմպիոններ՝ Լուխում Չխվիմիանին (ձյուդո), Լաշա Տալախաձեն (ծանրամարտ), Գենո Պետրիաշվիլին եւ Բեքա Լոմթաձեն (ազատ ոճի ըմբշամարտ), Նուգզար Ծուրծումիան եւ Լաշա Գոբաձեն (հունա-հռոմեական ոճի ըմբշամարտ):

Մյուս անվանակարգերում ուժեղագույններ ճանաչվեցին. Լավագույն հավաքական՝ Վրաստանի ջրագնդակի ազգային հավաքական, Լավագույն երիտասարդ մարզիկ՝ Լաշա Բեքաուրի (ձյուդո), Լավագույն մարզիկ ոչ օլիմպիական մարզաձեւում՝ Վախթանգ Չիդրաշվիլի (սամբո), Լավագույն մրցավար՝ Ռուսուդան Խոփերիա (բատուտ), Լավագույն ֆեդերացիա (ըստ նվաճած մեդալների թվի)՝ Ըմբշամարտի ֆեդերացիա, Լավագույն կին մարզիկ՝ էթեր Լիպարտելիանի (ձյուդո), Լավագույն մենեջեր՝ Կախի Կախիաշվիլի (ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ), Լավագույն մարզիչ՝ Գիորգի Յանտբելիձե (ազատ ոճի ըմբշամարտի մարզիչ), Լավագույն պարամարզիկ՝ Ռեւազ Չիկոիձե, Լավագույն պարամարզիկ կին՝ Իրմա Խեցուրիանի:

ԵՂԱՆԱԿ

## ՀՅՈՒՍԻՍՈՒՄ՝ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ, ՀԱՐԱՎՈՒՄ՝ ՁՆԱՏԵՂՈՒՄՆԵՐ



Վրաստանի ներքին գործերի նախարարության ճանապարհային ոստիկանության տեղեկատվությամբ, առատ ձյան պատճառով վրաց-ռուսական սահման տանող՝ «Կազբեգի-Վերին Լարս» ավտոճանապարհին արգելվել է բեռնատարների երթեւեկը:

Կցորդով ու կիսակցորդով մեքենաների տեղաշարժն արգելվել է Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս ավտոմայրուղու՝ Գուդաուրի-Կոբի հատվածում: Մնացած տրանսպորտի համար սահմանափակումներ չկան:

Հարավային Վրաստանում, մասնավորապես, Սամցխե-Ջավախեթիում առատ ձնատեղումները լուրջ հիմնախնդիրներ են ստեղծում ավտոճանապարհներին: Ճանապարհային ոստիկանությունը քաղաքացիներին հորդորում է ուղեւորության դեպքում պահպանել զգուշություն:

«Վրաստան» թերթի խմբագրակազմը խոր վշտով ընկալեց թերթի երկարամյա նախկին աշխատակցուհի՝



***Մարգո (Շուշանիկ) Ասատուրի ՍՈՒՄԲԱՏՅԱՆԻ***

մահը եւ իր ցավակցությունն է բերում նրա զավակներին, ընտանիքի մյուս անդամներին, հարազատներին ու բարեկամներին:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.ԱՄՆ-ի երկրորդ նախագահը՝ Ջոն ...: 4.Գիժ, խենթ: 8.Բանջարանոցի գետը: 9.Թիֆլիսում 1907 թվականին լույս ընծայված պարբերական: 10.Րաֆֆու պատմվածքներից: 13.Գյուղական կանացի բժիշկ, մանկաբարձ: 14.Պայմանի շաղկապ: 15.Ղազախստանի նախկին մայրաքաղաքը՝ ... Աթա: 17.Ստորադասական շաղկապ: 18.«Որսկան էի, դարձա ...» (Հ.Շիրազ): 19.Հովհ.Թումանյանի լեգենդներից: 21.Հիվանդություն: 23.Հայ անվանի դերասան, Շ.Ազնավուրի մեծ բարեկամներից՝ ... Պետրոսյան: 24.Աշխարհագրական անունների վերջավորություն: 25.Վերքի թողածը: 27.Բանջարանոցային բույս: 28.Իրաքյան քաղաք: 29.Սառը զենք: 31.Ժխտական նախածանց: 32.Դերասան Մկրտիչ Արզումանյանի կեղծանունը: 33.«Ողջո՜ւյն, ողջո՜ւյն, ձեզ հին ու նոր, ..., բարի ընկերներ» (Հովհ.Թումանյան): 34.Ծովինար աստվածուհու մյուս անուններից: 35.Նար-Դոսի երկերից՝ «Ես եւ ...»: 37.Վրացուհու տարածված անուն: 38.«Նաիրիան» կոսմետիկական բրենդի ստեղծողը՝ ... Մարկոսյան: 39.Ֆրանսիացի նկարչուհի Սերաֆինա ...: 40.Ընտանի հավատարիմ կենդանի: 42.Գրավող, ձգող: 44.Ազնավուրի զուգերգիչներից՝ ... Մինելի: 46.Հայ մեծ առակագիր, «Դատաստանագրքի» հեղինակը: 48.Տուֆից շինված, տուֆից կերտված: 49.Հերոս «Վարդանանք» վեպում, Վասակի որդիներից: 50.Գետ Վրաստանում: 51.Հայկական երաժշտական գործիք:

***ՈՒՂՂԱՁԻԳ.*** 2.Թբիլիսիի ֆուտբոլային ակումբը: 3.Գերասիմի շունը (Ի.Տուրգենեւ): 4.Լեռ Հայաստանում, որի լանջին թաղված է Գարեգին Նժդեհը: 5.Կոմիտասի երգերից: 6.Ժամանակի միավոր: 7.Թանկագին քար: 8.Քաղաք Ռուսաստանում: 12.Հիացական բացականչություն: 14.Հայկական ճաշատեսակ, սպաս: 16.Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: 20.ԱՄՆ նահանգներից: 21.Մեծ Եղեռնի ժամանակ կործանված քաղաք: 22.Տանը մոտիկ գտնվող: 23.Ձայնային տվյալ: 25.Զգոն, զգաստ: 26.Օրվա մաս: 30.Լեռ Հայաստանում, ուր մինչեւ Քրիստոնեության քարոզումը թաքնվել են Սուրբ կույսերը: 31.Փարիզում Արշակ Չոպանյանի հիմնադրած պարբերականը: 36.Հայոց ամենախելացի արքան: 41.Գյուղ Հայաստանի Շիրակի մարզում, Գյումրիի մոտ: 43.Հայ քաջ ֆիդայի: 44.Միայն, մեկուսի: 45.Ա.Բակունցի գրական հերոսներից: 46.Հացաբույսի տեսակ: 47.Վրացական ֆիլմ՝ «...ի այրին»:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Մեծատառ: 9.Ուլունք: 10.Իորի: 11.Հոփկինս: 13.Նպաստ: 16.Վեա: 17.Աին: 19.Պլոմբ: 22.Քլինթ: 24.Հռետոր: 25.Պահո: 27.Բուֆալո: 29.Անաբաս: 32.Բանգկոկ: 33.Քառակի: 35.Աբակ: 37.Խոկ: 39.Արինա: 40.Չթյա: 43.Կեղ: 44.Ճչոց: 47.Վաչ: 49.Ակակի: 50.Ալիա: 53.Անոտ: 54.Սեռ: 55.Ալամ: 57.Կուտ: 58.Ուտրեխտ:

***ՈՒՂՂԱՁԻԳ.*** 1.Զենով: 2.Դաբկա: 3.Ֆաինա: 4.Քուին: 5.Քուրա: 6.Սքոտ: 8.Ռոսիա: 12.Փերի: 14.Պելե: 15.Սումո: 18.Գթալ: 19.Պռունգ: 20.Ոտաբոբիկ: 21.Բրաս: 23.Նպատակ: 26.Հոբի: 28.Ուրախ: 29.Անձ: 30.Ակար: 31.Ականել: 34.Ռոկոկո: 36.Կաղ: 38.Օյա: 41.Թվիստ: 42.Աչառու: 45.Չանա: 46.Ցատկ: 48.Տիար: 51.Ալե: 52.Ամտ: 56.Ախ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН” Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445